

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ Վայոց ձորի մարզում 2020 թվականի քաղաքաշինության բնագավառում կատարված աշխատանքների մասին

Կազմել և ՀՀ ֆինանսների նախարարություն ենք ներկայացրել մարզի 2021-2023 թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրերը: Աշխատել ենք համայնքների հետ, սուբվենցիոն ծրագրերով իրականացվող օբյեկտների ընտրության, նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման ընթացքի և մրցույթների իրականացման գործում:

Հետևողական հսկողություն ենք իրականացնում քաղաքաշինության բնագավառում մարզի տարածքում իրականացվող ծրագրերի կատարմանը, որը հիմնականում կատարվում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվիրատվությամբ և հաստատված սուբվենցիոն ծրագրերով:

1. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվիրատվությամբ 2020թ-ի կատարվել է՝

Եղեգնաձոր համայնք

ա) Եղեգնաձոր համայնքում թիվ 5 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում առանց տանիքի պայմանագրային գումարը 24.6 մլն. դրամ: 2020թ-ին կատարվել է 17.5 մլն. դրամի շին. մոնտաժային աշխատանքներ :

բ) Եղեգնաձորի թիվ 1 նոր դպրոցի կառուցում պայմանագրային գումարը 1. 169 մլրդ. դրամ: 2019 թ-ին կատարվել է 86.4 մլն.դրամի , 2020թ-ին նախատեսված էր կատարելու 250.0 մլն. դրամի շին. մոնտաժային աշխատանքներ, կատարվել է 391.2 մլն. դրամի շին. մոնտաժային աշխատանքներ : Ավարտը 2021թ.:

Արենի համայնք՝ Ջերմուկի քաղաքային զբոսայգու բարեկարգման, հեծանվուղու և սանհանգույցների կառուցում պայմանագրային գումարը 215.4 մլն. դրամ: 2020թ-ի կատարվել է 175.0 մլն. դրամի շինարարական աշխատանքներ:

ա) Ռինդ բնակավայրի մանկապարտեզի վերակառուցում պայմանագրային գումարը 129.2 մլն.դրամ: 2018 թ-ին կատարվել է 44.1 մլն.դրամի, 2019թ-ին՝ 85.117 մլն. դրամի, 2020թ-ի կատարվել է լրացուցիչ 12.3 մլն. դրամի շինարարական աշխատանքներ :

բ) Արենի բնակավայրում «Արենի Ույան Հոտել» հյուրանոցային համալիրի ենթակառուցվածքների կառուցման համար նախատեսված է պայմանագրային գումարով 660.774 մլն. դրամ: Աշխատանքներն ավարտված են:

գ) Մ- Արենի-Խաչիկ-Գնիշիկ Եղեգնաձոր հանրապետական նշանակության ավտոճանապարհի առաջին կիլոմետրում Արենի գյուղի մեջ Արփա գետի վրա կառուցված կամրջի վերանորոգում պայմանագրային գումարը 24.5 մլն. դրամ, 2020թ-ին կատարվել է 5.1 մլն. դրամի շին. վերանորոգման աշխատանքներ:

Եղեգիս համայնք՝

ա) Հորս բնակավայրի օրվա կարգավորիչ ջրամբարի կառուցման շարունակություն 3.6 մլն.դրամ:

Ջառիթափ համայնք՝

ա) Խնձորուտ բնակավայրում ջրաղբյուրի և խմելու ջրագծի վերակառուցում պայմանագրային գումարը 16.052 մլն. դրամ : Շինարարական աշխատանքները ավարտված են:

բ) Բարձրունու ինքնահոս ոռոգման համակարգի կառուցում-87.144 մլն. դրամ :

Ջերմուկ համայնք՝

ա)

բ) Ջերմուկի համայնքի ձախափնյա և աջափնյա թաղամասերի բնակելի շենքերի շքամուտքերի վերանորոգման համար պայմանագրային գումարը 32.37 մլն. դրամ : 2020թ-ի կատարվել է 11.8 մլն. դրամի շինարարական աշխատանքներ:

Ընդամենը՝ 1380.47 մլն. դրամ

2. 2019թ-ին սուբվենցիոն ծրագրերով հատկացված, սակայն չկատարված 9 ծրագիր շարունակվել և ավարտվել են 2020 թվականին այդ թվում՝

ա) Արենի ,Աղավնաձոր, Արփի, Չիվա, Ռինդ բնակավայրերի փողոցների ասֆալտապատում՝ աշխատանքներն ավարտված են:

բ) Ջերմուկ քաղաքի մարզադպրոցի մասնաշենքի հիմնանորոգում և արդիականացում՝ աշխատանքներն ավարտված են:

գ) Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի մանկապարտեզի վերանորոգում՝ ընթացքի մեջ է:

դ) Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրում այլընտրանքային արևային էներգիայի համակարգի տեղադրում Գետափի մշակույթի տան տանիքին՝ աշխատանքներն ավարտված են:

Գետափ բնակավայրի մշակույթի տան ջեռուցման համակարգի տեղադրում, դռների ու պատուհանների փոխում՝

:

ե) Եղեգնաձոր համայնքի Անդրանիկի փողոցի վերանորոգման, Արսենյան 9, Մամիկոնյան 12 բնակելի շենքերի բակի, Գլաձորյան փողոցի , Կամոյի 2Ա բնակելի շենքի բակի նորոգման աշխատանքներ՝ աշխատանքներն ավարտվել են:

Ընդամենը-43.7 մլն. դրամ

2020թ-ին սուբվենցիոն ծրագրերով իրականացվել է՝

Արենի համայնք՝

Աղավնաձոր բնակավայրում 4 կապտածների նորոգում-14.9 մլն. դրամ

Աղավնաձոր բնակավայրում 2.300 գծմ խմելու ջրագծի կառուցում-3.92 մլն. դրամ

Աղավնաձոր բնակավայրում կոյուղու գծերի մասնակի կառուցում-4.5 մլն. դրամ

Արենի բնակ. Նորավանքի ձորում խմելու ջրագծի կապտածի նորոգում-6.05 մլն. դրամ

Արենի բնակավայրում ,Նորավանքի ձորն Արենի խմելու ջրի արտաքին և ներքին ցանցերի կառուցում-58.8 մլն. դրամ

Արենի բնակավայրում ,Նորավանքի ձորն տարածքում խմելու ջրի 2 կապտածների և թաց հորի կառուցում-8.3 մլն. դրամ

Գնիշիկ բնակավայրում ,Կարմիր քարն տարածքում խմելու 2 կապտածների և ջրագծերի կառուցում-7.098 մլն. դրամ

Ելփին բնակավայրում ,Մոխրոտն հանդամասի ջրաղբյուրի 2 կապտածների հիմնանորոգում-3.3 մլն. դրամ

Խաչիկ բնակավայրում ,Կարապետի ճոթերն հանդամասից մինչև վերին թաղ խմելու ջրագծի արտաքին ցանցի և կապտածի կառուցում-7.3 մլն. դրամ

Չիվա բնակավայրում 3 կապտածի 1.4 կմ արտաքին ցանցի և 1 կմ ներքին ցանցի հիմնանորոգում-48.0 մլն. դրամ

Ռինդ բնակավայրում խմելու ջրագծերի կառուցում-9.23 մլն. դրամ

Ագարակաձոր բնակավայրում 3-րդ փողոցում 0.5 կմ, 7-րդ փողոցում 1.5 կմ ոռոգման ջրագծերի ներքին ցանցի կառուցում-15.536 մլն. դրամ

Ելփին բնակավայրի ,Սարի թաղն թաղամասում կիսախողովակների տեղադրում , ոռոգման ցանցի կառուցում-32.432 մլն. դրամ

Ելփին բնակավայրի գերեզմանները շրջանցող ոռոգման ցանցի կառուցում-6.0 մլն. դրամ
Խաչիկ բնակավայրի Մայր ջրագծից սկիզբ առնող ոռոգման ցանցի կառուցում-29.520 մլն. դրամ

Ռինդ բնակավայրում ,Անաջատուն հանդամասից հին գյուղ ոռոգման ջրագծի կառուցում-41.33 մլն. դրամ

Աղավնաձոր բնակավայրում հենապատերի կառուցում-4.188 մլն. դրամ

Արենի, Աղավնաձոր, Ելփին, Խաչիկ, Չիվա, Ռինդ բնակավայրերում մեկական կարկտակայանի տեղադրում-12.6 մլն. դրամ

Աղավնաձոր բնակավայրում թվով 10 փողոցների գազաֆիկացում-12.720 մլն. դրամ

Աղավնաձոր բնակավայրում մանկապարտեզի գազաֆիկացում-4.152 մլն. դրամ

Ագարակաձոր բնակավայրում թվով 2 փողոցների գազաֆիկացում-7.173 մլն. դրամ

Ագարակաձոր բնակավայրում մանկապարտեզի գազաֆիկացում-1.434 մլն. դրամ

Արփի բնակավայրում թվով 2 փողոցների գազաֆիկացում-9.060 մլն. դրամ

Արենի բնակավայրում մեքենատրակտորային պարկի կառուցում-75.224 մլն. դրամ:

Կատարվել է աշխատանքների 10%-ը, 7.5 դրամ: Աշխատանքները շարունակվում են:

Առաջին փուլի ավարտը նախատեսված է 2021 թվականին:

Ընդամենը՝ 355.043 մլն. դրամ

Գլաձոր համայնք՝

Գլաձոր բնակավայրում մշակույթի տան դահլիճի նորոգում-25.59 մլն. դրամ

Գլաձոր բնակավայրում ցամաքուրդ (դրենաժ) կառուցում-31.75 մլն. դրամ

Վերնաշեն բնակավայրում ջրաչափական հորերի կառուցում-14.72 մլն. դրամ

Գլաձոր բնակավայրի որոշ փողոցների գազաֆիկացման համալրում, Գլաձորի մշակույթի տան և Վերնաշեն մանկապարտեզի գազաֆիկացում-29.81 մլն. դրամ

Ընդամենը՝ 101.87 մլն. դրամ

Եղեգիս համայնք՝

Շատին բնակավայրում մանկապարտեզի վերակառուցում-48.766 մլն. դրամ: Կատարվել է ընդհանուր աշխատանքների մոտ 5 տոկոսը, 2.4 մլն. դրամ: Աշխատանքները դադարեցվել են տեխնիկական պատճառով:

Քարագլուխ բնակավայրում ոռոգման ցանցի կառուցում-11.514 մլն. դրամ

Աղնջաձոր բնակավայրում ոռոգման ցանցի կառուցում-17.880 մլն. դրամ

Շատին բնակավայրում ոռոգման ցանցի կառուցում-16.0 մլն. դրամ

Մալի բնակավայրում ոռոգման ցանցի կառուցում: Տեխնիկական պատճառով աշխատանքները տեղափոխվել են 2021 թ.

Հերմոն բնակավայրում ոռոգման ցանցի կառուցում-63.420 մլն. դրամ: Կատարված է աշխատանքների 80%-ը, 50.7 մլն. դրամ: Աշխատանքները ընթացքի մեջ են և կավարտվի 2021 թվականին:

Հորբատեղ, Գողթանիկ, Թառաթումբ, Շատին բնակավայրերում խմելու ջրի խողովակաշարի կառուցում և վերանորոգում, ՕԿՁ-ների վերանորոգում-34.65 մլն. դրամ

Ընդամենը՝ 133.144 մլն. դրամ

Եղեգնաձոր համայնք՝

Եղեգնաձոր քաղաքի Բաղրամյան փողոցի լուսավորության ցանցի կառուցում-15.8 մլն. դրամ (Պայմանագիրը կնքվել է 15.12.2020թ-ին: Աշխատանքները կավարտվի 2021թ-ին:

Եղեգնաձոր քաղաքի Նոր ավան թաղամասի լուսավորության ցանցի կառուցում-18.3 մլն. դրամ: Աշխատանքները ընթացքի մեջ են: Փոխանցվում է 2021 թվականին:

Ընդամենը՝ 18.3 մլն. դրամ

Մալիշկա համայնք՝

Մալիշկա բնակավայրի փողոցային լուսավորության կառուցում-9.4 մլն. դրամ

Ընդամենը՝ 9.4 մլն. դրամ

Զատիթափ համայնք՝

Մարտիրոս, Բարձրունի, Մերս բնակավայրերի խմելու ջրագծերի գլխամասային կառույցների արտաքին և ներքին ցանցերի կապիտալ վերանորոգման աշխատանքներ-61.54 մլն. դրամ: Մարտիրոս և Բարձրունի բնակավայրերի օբյեկտներում արձանագրվել է թերություններ, որի պատճառով օբյեկտների շահագործումը տեղափոխվել է 2021թ.

Զատիթափ և Մարավան բնակավայրերի աղբյուրների գլխամասային կառույցների, ջրագծերի և ջրատարի կապիտալ վերանորոգման աշխատանքներ-107.445 մլն. դրամ:

Մարավան բնակավայրի օբյեկտում արձանագրվել է թերություններ, որի պատճառով օբյեկտի շահագործումը տեղափոխվել է 2021թ.

Արտավան բնակավայրի խմելու ջրագծի գլխամասային կառույցների, ջրագծերի ներքին ու արտաքին ցանցերի կապիտալ վերանորոգման աշխատանքներ-36.4 մլն. դրամ

Ընդամենը՝ 205.385 մլն. դրամ

Ջերմուկ համայնք՝

Ջերմուկի քաղաքի Աջափնյա և Չախափնյա թաղամասերի բակերի բարեկարգում-165.9 մլն.

Մանկական զարգացման կենտրոնի վերակառուցում-28.6 մլն. դրամ: Կատարված է աշխատանքների 73%-ը, 20.9 մլն. դրամ: Փոխանցվում է 2021 թվական:

Գնդևազի մանկապարտեզի մասնակի նորոգում-9.27 մլն. դրամ: Կատարված է աշխատանքների 73%-ը, 6.7 մլն. դրամ: Փոխանցվում է 2021 թվական:

Գնդևազի և Ջերմուկի „Զատիկն մանկապարտեզների բակերի ասֆալտապատում-15.85 մլն. դրամ

Ջերմուկ քաղաքում 300 կվտ հզորության արևային կայանի կառուցում-82.62 մլն. դրամ:

Կատարված է աշխատանքների 90%-ը, 74.4 մլն. դրամ: Փոխանցվում է 2021 թվական:

Ընդամենը՝ 283.75 մլն. դրամ

Համայնքային բյուջեներով կատարվել է ընթացիկ և հիմնական նորոգման աշխատանքներ-28.94 մլն. դրամ

2020 թ-ին նախատեսված էր փոքրաքանակ երեխաներով համալրված տիպային (մոդուլային) 3 նոր դպրոցների շենքերի կառուցում:

Եղեգիս բնակավայրում կատարվել է հին դպրոցի շենքի ապամոնտաժման և նորի կառուցման հողային աշխատանքները: Իսկ Չիվա և Գոմք բնակավայրերում կկայանա նոր մրցույթ: Աշխատանքները կիրականացվի 2021 թ-ից:

2020 թ-ին ընդամենը մարզում-2472.858 մլն. դրամ

Ընդամենը մարզում-2560.002 մլն. դրամ

Ճարտարապետության բնագավառ

Աշխատանք է տարվել միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների հարակից տարածքներում գտնվող շինությունների լիարժեք ուսումնասիրման և խոչընդոտ առաջացնող շինությունների վերացման ուղղությամբ:

Նշված ժամանակահատվածում առաջարկություններ ենք ներկայացրել ՀՀ ՏԿԵ նախարարություն համայնքներում Մ-2 միջպետական ճանապարհի հարակից տարածքում կառուցապատման համար նախագծման թույլտվություն ստանալու համար:

Համաձայնություն ենք տվել ՀՀ կառավարության որոշումների մեջ լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկություններին և որոշման նախագծերին :

Կատարվել է հատուկ պահպանվող տարածքներում կառուցապատման առաջադրանքների թույլտվություններ ստանալու և սահմանված ժամկետների վրա հսկողություն սահմանելու աշխատանքներ :

Կատարվել է մարզի 45 բնակավայրերի 6 համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի կազմման համար համայնքների կողմից ելակետային տվյալների տրամադրման աշխատանքների կազմակերպում, առցանց քննարկումներ, ինչպես նաև արդյունքների քննարկման կազմակերպչական աշխատանքներ:

Տրվել է համաձայնություններ համայնքների կողմից հողամասերի գործառնական նշանակության փոփոխությունների առաջարկություններին:

Աշխատանքներ է տարվել ՀՀ կառավարության 30.04.2020թ թիվ 669-Ա որոշմամբ օբյեկտները համայնքներին նվիրաբերելու ուղղությամբ:

Կատարվել է ուսումնասիրություն և տրվել տեղեկատվություն մարզի գերեզմանոցների վերաբերյալ:

Բացատրական աշխատանքներ ենք տարել մարզում շինթույլտվությունների տրամադրման էլեկտրոնային համակարգի գործարկման վերաբերյալ և համայնքներից ընդունել ենք թվով 157 շինարարության թույլտվություն և 10 քանդման թույլտվություն:

Բոլոր համայնքներին պարբերաբար տեղեկացվել է քաղաքաշինության բնագավառում օրենսդրական ակտերում կատարված փոփոխությունների մասին և ուսումնասիրվել է համայնքներում կայացված որոշումների (քաղաքաշինության բնագավառում) համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը:

Հետևողական աշխատանքներ է տարվել համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող վարկային թիվ 5222-ԱՄ ծրագրի շրջանակներում Եղեգնաձոր քաղաքում կառուցվելիք նոր հիվանդանոցի շենքի հողհատկացման ուղղությամբ, կատարվել է հողամասերի փոխանակության հանձնման-ընդունման աշխատանքներ:

Մասնակցել ենք ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից կազմակերպված առցանց շնորհանդեսին, որտեղ քննարկվում էր կոմիտեի կողմից ներկայացված՝ լիազոր մարմին ներկայացվող փաթեթում ներառվող փաստաթղթերի ցանկի, ուղեցույց նախագիծը:

Կատարվել է ուսումնասիրություն մարզի քարաթափման գոտիներում, առանձնացվել առավել վտանգավոր 3 գոտիները և առցանց խորհրդակցությունում ներկայացվել ՀՀ ՏԿԵՆ-ի կողմից ստեղծված աշխատանքային խմբի ղեկավարին:

Ջրամատակարարման, ջրհեռացման և կոմունալ տնտեսության բնագավառ

Վայոց ձորի մարզում ազգաբնակչությունը ապահովված է շուրջօրյա խմելու ջրով:

«Վեռլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից սպասարկվում է թվով 7 ջրամատակարարման համակարգեր:

Ընկերության բաժանորդների թիվը 9235 է, որից՝ 752-ը իրավաբանական կազմակերպություններ: 2019թ-ի համեմատ բաժանորդների թիվը 2020թ-ին ավելացել է 697 բաժանորդով, որից 33-ը իրավաբանական կազմակերպություններ:

Մարզի մյուս բնակավայրերի ջրամատակարարման համակարգերը շահագործվում են համայնքապետարանների կողմից:

Առաջարկվել է համայքի ղեկավարներին անկանխատեսելի հետևանքներից խուսափելու համար ձեռնարկել համապատասխան միջոցառումներ ջրամատակարարման համակարգերում արձանագրված թերությունները շտկելու ուղղությամբ, որի ընթացքում 2020թ-ի ընթացքում մարզում խմելու ջրի հետ կապված բռնկումներ չեն արձանագրվել:

Վայոց ձորի մարզի 8 համայնքների 44 բնակավայրերից գազաֆիկացված է 17 բնակավայրը: Այս բնագավառում առաջնահերթությունը մնում է չգազաֆիկացված բնակավայրերի գազիֆիկացումը:

Գազաֆիկացման առկայությունը կնպաստի անտառների, էկոլոգիայի և դրանից բխող խնդիրների լուծմանը:

Մարզում «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բաժանորդների թիվը 2020թ-ի դրությամբ 8731 է, որից 4370 բազմաբնակարան շենքերի բնակարաններն են, 4089 անհատական տներ և 272 իրավաբանական կազմակերպություններ: Բաժանորդների թիվը 2019 թ-ի համեմատ ավելացել է 145-ով: 2020թ-ի ընթացքում տեղադրվել է 145 անվտանգության ազդանշանային սարքեր: Բնական գազի շահագործման ընթացքում արտակարգ դեպքեր չեն արձանագրվել: Աշխատանքներ են տարվում ազգաբնակչության հետ այլընտրանքային էներգետիկ համակարգերից օգտվելու համար:

**ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի
քաղաքաշինության վարչություն**

Ռ.Մինասյան